Արձանագրություն թիվ 01

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
գ. Եղեգնուտ կայացած՝ 14.07.2012թ. ժամը 15^{00} – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 65 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը, ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Զեկուցողը մանրամասը ներկայացրեց կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով համայնքի 2012թ. համայնքային բյուջեի կիսամյակի արդյունքները, ինչպես մուտքային, այնպես էլ ծախսային մասով:
Այսպես՝ 01.01.2012թ. – 01.07.2012թ. ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե մուտքագրվել է 12080.7 հազ. դրամ, որը կազմում է 96.2%, իսկ ծախսային մասը կազմում է 19005.9 դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 77.1 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան	փաստացի հազ. դրամ	կատ. %
1. հողի հարկ	300.0	258.2	86.0%
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	250.0	84.3	33.7%
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	703.3	654.5	93.3%
4. հողի վարձավճար	250.0	54.0	21.6%
5. տեղական տուրքեր	20.0	3.0	15.0%
6. պետական բյուջեից տրվող դոտացիա	11026.7	11026.7	100%
Ընդամենը եկամուտներ	1250.6	12080.7	96.2% :

Վճարվել է.

1. աշխատավարձ	5082.5 հազ. դրամ
2. պարտադիր սոցիալական վճար	918.8 հազ. դրամ
3. գրասենյակային և գրենական ապրանքներ	290.0 հազ. դրամ
4. օգն. սոց. անապ. ընտանիքներին	580.0 հազ. դրամ
5. Տրանսպորտային սարքավորումներ	2800.0 հազ. դրամ
6. կապի ծառայություններ	55.0 հազ. դրամ
7.էներգետիկ ծառայություններ	1004.3 հազ. դրամ
8. Տրանսպորտային նյութեր	500.0 հազ. դրամ
9. մշակութային միջոցառումներ	150.0 հազ. դրամ
10. տեղեկատվական ծառայություններ	171.5 հազ. դրամ
11. համակարգչային ծառայություններ	56.8 հազ. դրամ
12. խ/մ ջրի պոմպի և տրանսֆորմատորի վերանորոգում	397.0 հազ. դրամ
13. մանկապարտեզի շենքի վերանորոգում	7000.0 հազ. դրամ
Ընդամենը ծախսեր	19005.9 հազ. դրամ

Նշվեց նաև, որ համայնքում առկա են հետևյալ խնդիրները՝

1. . Համայնքի խմելաջրի վիճակի բարելավում և մեկ հատ նոր խորքային հորի հորատում:

2 Համայնքի ոռոգման ջրի բարելավում և ջրագծերի վերանորոգում:

Արտահայտվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

ո ր ո շ ու մ է՝

1. Համայնքի ղեկավարի 2012թ. կիսամյակում կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և գլխ. մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
   ա) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ եռամսյակների 100% - ով:
   բ) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գույքահարկի մասով, մինչև երրորդ եռամսյակի վերջը ապահովել 85% - ով:
   գ) բյուջեի կատարողականը տարեվերջը հասցնել մինչև 100 % և կատարել տարեկան պարտավորությունները:
   դ) ձեռնարկել համապատասխան ծրագրային միջոցներ, ներդրումների միջոցով ապահովելու համայնքի հետագա սոցիալ-տնտեսական զարգացումը:

Նախագահ՝ Ռ. Մարգարյան

Քարտուղար՝ Ս. Ալեքսանյան